

ՀԱՅ ՑԵՂԱՆՈՒՆԸ

Պետրոսյան Ա. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հայաստան)

alpehist@gmail.com

Բանալի բառեր՝ հայոց ցեղանուններ, նախապատմություն, ազգագրություն, հնդեվրոպաբանություն, հայ հինարևելյան կապեր:

Հայ ժողովրդի ծագման և ձևավորման հարցերի ուսումնասիրության առանցքային հարցերից է հայ ցեղանվան ստուգաբանությունը: Արդեն XIX դարում այն հանգեցվել է հնդեվրոպական *poti- «տեր, ամուսին» արմատին (§. Շախգել, Ռ. Կիպերտ): Իր վերջին աշխատանքներում այս ստուգաբանությունն էր պաշտպանում և Գ. Ջահուկյանը: Այժմ հնարավոր է նոր փաստարկներ ներկայացնել այդ ստուգաբանության օգտին: Այսպես, որոշ բարբառներում հայ բառը հանդես է գալիս որպես մեծահասակ կանանց կողմից ամուսնուն տրվող անվանում՝ «ամուսին, տանտեր, ընտանիքի գլուխ» իմաստով (հմմտ. հատկապես «մեր հայը» ձևը): Այդ բառը, մեծ հավանականությամբ, կարող է ծագեցվել հնդեվրոպական *poti-ից (> pati- > hat'i > հայ ճանապարհով): Հոգնակի սեռական հայոց ձևը ցույց է տալիս, որ արմատին, հավանաբար, հավելվել է հայերենում մեծ տարածում ունեցող հնդեվրոպական *(y)o- վերջածանցը:

Այս ստուգաբանության օգտին է խոսում հայոց ավանդական նախնի Հայկի կերպարի քննությունը: Հայկը մի հսկայական, երեք հարյուր տղամարդ ընդգրկող նահապետական գերդաստանի նահապետն է: Ըստ այդմ, նրա անունը նույնպես կարող է հանգել *poti-ին, դիցանուններին բնորոշ նվազական-քնքշական -իկ ածանցով, (Հայ-իկ > Հայկ, հմմտ. Աստղիկ դիցանունը և Հայկի որդու նույնատիպ ածանցով կազմված Արամանեակ անունը): Հատկանշական է, որ Հայկի

Նահապետ կոչման երկրորդ մասը նույն արմատի իրանական արտացոլումն է, և նրա հակառակորդ Բելի անունը նույնպես նշանակում է «տեր» (սեմական b'1, որը կիրառվել է նաև որպես անկախ դիցանուն): Հայ ցեղանունը, այսպիսով, համադրելի է հնդիրանական arya (հնդեվրոպական *aryo-) «տեր» ցեղանվանը՝ որպես հասարակության սոցիալական կառուցվածքի տերմին:

Մյուս կողմից՝ ի հայտ են գալիս նաև հինարևելյան կապեր: Ընդարձակ ընտանիքի գլուխը՝ նահապետը խոռոհերեն կոչվում էր ewri «տեր»: Ընտանիքներն ունեին իրենց ամբողջական հողային ֆոնդը՝ ewru, որը գտնվում էր ewri-ի տիրապետության տակ: Առավել թույլ ընտանեկան խմբերն իրենց հպատակությունն էին հայտնում հարևան ուժեղ ընտանիքի ewri-ին: Այսպիսի ընտանիքների խումբը ձևավորում էր նոր միավորում՝ գյուղ, որը կամ որոնց միավորումը, իր հերթին, կարող էր աճելով վերածվել քաղաքի կամ քաղաք-պետության:

Այս պատկերը միանգամայն համադրելի է հայկական տվյալների հետ: Հայկը հայոց հնագույն ընտանիքի տեր-նահապետն է: Հայկի հետևորդները, ինչպես և նրանց երկիրը, կոչվում են Հայք, ինչը նույնական է խոռոհական ewri «տեր, նահապետ» և ewru «նահապետի հողային ժառանգական տիրապետություն» տերմինների հարաբերությունը: Հայկին և նրա ժառանգներին իրենց հպատակությունն են հայտնում տեղական ավելի թույլ համայնքները: Այսպես սկիզբ է դրվում Հայք-Հայաստան երկրին:

Հայ ցեղանվան այս ստուգաբանությունը և բացահայտվող հնդեվրոպական ու հինարևելյան կապերը ցույց են տալիս, որ հարևան՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական ավանդույթներում առկա է եղել սոցիալական ընդհանուր կառուցվածք և զարգացում, ինչը կարող է բացատրվել վաղ և երկարատև շփումներով:

Petrosyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of
Archaeology and Ethnography, Armenia)